# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, Շահումյան 5
Հեռ. 0234- 6 - 00 - 78
Էլ.փոստ: taperakan.ararat@mta.gov.am, taperakan@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*30 նոյեմբերի 2020 թվականի թիվ 41- Ա*

### ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

***համայնքի ավագանին որոշում է***

- Հաստատել 2020 թվականի նոյեմբերի 30-ի ավագանու թիվ 6 հերթական նիստի օրակարգը:

### ՕՐԱԿԱՐԳ

1) ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ: (ԶԵԿ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ )
2) ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ: (ԶԵԿ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ )
3) ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ: (ԶԵԿ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ )
4)ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021Թ._Ի ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ: (ԶԵԿ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ )
5) 03-093-0036-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ : (ԶԵԿ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ )
6) 03-093-0051-0027 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ : (ԶԵԿ. ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ )

*Որոշմանը քվեարկեցին Կողմ՝6 հոգի Դեմ՝0 հոգի Ձեռնպահ՝0 հոգի*

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՄԱՂԱՔՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
5. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, Շահումյան 5
Հեռ. 0234- 6 - 00 - 78
Էլ.փոստ: taperakan.ararat@mta.gov.am, taperakan@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*30 նոյեմբերի 2020 թվականի թիվ 42- Ն*

## ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի պահանջներով

*համայնքի ավագանին որոշում է*

Հաստատել Տափերական համայնքի ղեկավարի կողմից ներկայացրած Տափերական համայնքի 2020 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի ընթացքի մասին հաշվետվությունը համաձայն հավելվածների:

*Որոշմանը քվեարկեցին* *Կողմ՝ 6 հոգի* *Դեմ՝ 0 հոգի* *Ձեռնպահ՝ 0 հոգի*

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՄԱՂԱՔՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
5. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30 ԹԻՎ 42 -Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

| Հ/Հ | | Եկամուտների անվանումը | Տարեկան բյուջեն | 2020թ. Հաշվետու ժամանակաշրջան 3-րդ եռամսյակ հազար դրամ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | պլան | պլան | փաստ | կատարման % -ը | կատարման %-ը տարեկան պլանի նկատմամբ |
| Խումբ | Ենթա - խումբ | ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ | **111257.3** | **83443.0** | **71517.5** | **85.7** | **64.3** |
| | | *Հարկային եկամուտներ* | | | | | |
| 1 | 1.1 | Հողի հարկ | **14550.0** | **10912.5** | **3742.0** | **34.3** | **25.7** |
| | 1.2 | Գույքահարկ | 12550.0 | **9412.5** | **8564.0** | **91.0** | **68.2** |
| 2 | | Տեղական տուրքեր ընդամենը | 827.0 | **620.3** | **1026.0** | **165.4** | **124.1** |
| | 2.1 | Օբյեկտները վերակառուցելու թույլտրվություն,շինթույլտվություն | 100.0 | **75.0** | **90.0** | **120.0** | **90.0** |
| | 2.2 | Ոգելից խմիչքների և ծխախոտի թույլտվություն | 344.0 | **258.0** | **440.0** | **170.5** | **127.9** |
| | 2.3 | Հեղուկ վառելիքի և բնական գազի վաճառքի թույտվություն | 300.0 | **225.0** | **300.0** | **133.3** | **100.0** |
| | 2.4 | Ժամը 24-00ից հետո աշխատելու | 50.0 | **37.5** | **75.0** | **200.0** | **150.0** |
| **3** | | *Ոչ հարկային եկամուտներ* | | | | | |
| | 3.1 | Համայնքային հողերի օգտագործման վարձակալության վճար | 850.0 | **637.5** | **439.0** | **68.9** | **51.6** |
| | 3.2 | Համայնքային սեփականություն համարվող գույքի վարձակալության վճարներ | 1200.0 | **900.0** | **915.0** | **101.7** | **76.3** |
| | 3.3 | Աղբահանություն | 3817.0 | **2862.8** | **1158.0** | **40.5** | **30.3** |
| | 3.4 | Ծնողական գումար | 5500.0 | **4125.0** | **917.5** | **22.2** | **16.7** |
| 4 | 4.1 | Դոտացիա պետբյուջեից | 71943.3 | **53957.5** | **53851.0** | **99.8** | **74.9** |
| | | **ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ** | **20415.2** | **15311.4** | **13560.0** | **88.6** | **66.4** |
| | | Օտարումից մուտքեր | 15000.0 | **11250.0** | **8144.2** | **72.4** | **54.3** |
| | | Տարեսկզբի ազատ մնացորդ | 5415.2 | **4061.4** | **5415.2** | **133.3** | **100.0** |
| | | *Ընդամենը* | 131672.5 | **98754.4** | **85077.5** | **86.2** | **64.6** |

ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄՈՒՇԵՂ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 2
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 42-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

| N | | Ծախսերի անվանումը | Տարեկան բյուջեն | 2020թ. Հաշվետու ժամանակաշրջան 3-րդ եռամսյակ, | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Խումբ | ենթախումբ | | Պլան | պլան | փաստ | Կատարման.% | Կատարման% տարեկան պլանի նկատմամբ |
| | | | հազար դրամ | | | | |
| | | **Վարչական բյուջե** | **111257.3** | **83443.0** | | | |
| 1 | | Տեղական ինքնակառավարում | **27960.0** | **20970.0** | 23346.0 | 111.3 | 83.5 |
| 2 | | Կրթություն և գիտություն /մանկ./ | **35700.0** | **26775.0** | 24930.0 | 93.1 | 69.8 |
| 3 | | Առողջապահություն | **100.0** | **75.0** | 0.0 | 0.0 | 0.0 |
| 4 | | Մշակույթ և սպորտ /արտադպրոցական/ | **13000.0** | **9750.0** | 8685.0 | 89.1 | 66.8 |
| 5 | | Բնակկոմունալ տնտեսություն | **1800.0** | **1350.0** | 1008.0 | 74.7 | 56.0 |
| 6 | | Հուղարկավորության նպաստ | **1500.0** | **1125.0** | 1260.0 | 112.0 | 84.0 |
| 7 | | Այլ նպաստներ բյուջեից | **6000.0** | **4500.0** | 4570.0 | 101.6 | 76.2 |
| 8 | | Շրջակա միջավայրի պաշտպանություն | **350.0** | **262.5** | 350.0 | 133.3 | 100.0 |
| 9 | | Աղբահանություն | **14600.0** | **10950.0** | 11431.0 | 104.4 | 78.3 |
| 10 | | Պահուստային ֆոնդ | 5800.0 | **4350.0** | 5800.0 | 133.3 | 100.0 |
| | | **Ֆոնդային բյուջե** | **20415.0** | **15311.3** | **5170.0** | 33.8 | 25.3 |
| 1 | | Կապիտալ շինարարություն | 19015.2 | **14261.4** | 4170.0 | 29.2 | 21.9 |
| 2 | | Նախագծահետազոտական ծախսեր | 1400.0 | **1050.0** | 1000.0 | 95.2 | 71.4 |
| | | **Ընդամենը** | **131672.3** | | | | |

ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՄՈՒՇԵՂ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, Շահումյան 5
Հեռ. 0234- 6 - 00 - 78
Էլ.փոստ: taperakan.ararat@mta.gov.am, taperakan@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*30 նոյեմբերի 2020 թվականի թիվ 43- Ն*

## ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18 –րդ հոդվածի 1-ին կետի 5) ենթակետով

*համայնքի ավագանին որոշում է*

Տափերական համայնքի 2020 թվականի բյուջեում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

*Որոշմանը քվեարկեցին Կողմ՝ 6 հոգի Դեմ՝ 0 հոգի Ձեռնպահ՝ 0 հոգի*

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՄԱՂԱՔՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
5. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

Հավելված
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30 -Ի ԹԻՎ 43-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Վարչական բյուջեում կատարել փոփոխություն.

1) ա)Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից կատարել հատկացում 200.000 ՀՀ դրամ ֆոնդային բյուջե:

բ) Վարչական բյուջեի ֆոնդային բյուջե հատկացման պլանը սահմանել 2.200.000 ՀՀ դրամ:

2) Պակասեցնել եկամուտներ

ա ) հողի հարկի եկամտային պլանը պակասեցնել 852.000 ՀՀ դրամով, ճշտված պլանը սահմանել 13.698.000 ՀՀ դրամ:

բ ) Ծնողական գումարներ եկամտային պլանը պակասեցնել 4.525.000 ՀՀ դրամ:

ճշտված պլանը սահմանել 975.000 ՀՀ դրամ:

4) Պակասեցնել ծախսեր Նախադպրոցական կրթություն ծրագրի 4639 տնտեսագիտական դասակարգման հոդվածով նախատեսված ծախսային պլանը 5.500.000 ՀՀ դրամով, ճշտված պլանը սահմանել 29.000.000 ՀՀ դրամ:

2. Վարչական բյուջեում ավելացնել ծախսեր

1) Կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածի պլանը ավելացնել 672.000 ՀՀ դրամ, ճշտված պլանը սահմանել 24.372.000 ՀՀ դրամ:

4112 հոդվածի պլանը ավելացնել 1.900.000 ՀՀ դրամ, ճշտված պլանը սահմանել 2.000.000 ՀՀ դրամ:

4269 հոդվածի պլանը ավելացնել 600.000 ՀՀ դրամով, ճշտված պլանը սահմանել 900.000 ՀՀ դրամ:

4267 հոդվածի պլանը ավելացնել 100.000 ՀՀ դրամով, ճշտված պլանը սահմանել 300.000 ՀՀ դրամ:

2) Մշակույթի տներ գործառնական դասակարգման ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածի պլանը պակասեցնել 440.000 ՀՀ դրամով, ճշտված պլանը սահմանել 8.760.000 ՀՀ դրամ:

4112 հոդվածի պլանը սահմանել 655.000 ՀՀ դրամ:

3) <<Աղբահանություն և սանիտարական մաքրում >> գործառնական դասակարգման ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 4111 հոդվածի պլանը ավելացնել 60.000 ՀՀ դրամով, ճշտված պլանը սահմանել 7.260.000 ՀՀ դրամ:

4112 հոդվածի պլանը սահմանել 610.000 ՀՀ դրամ:

2. Ֆոնդային բյուջեում կատարել փոփոխություններ

1) Փողոցների լուսավորում գործառնական դասակարգման ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 5112 հոդվածի պլանը ավելացնել 90.000 ՀՀ դրամով, ճշտված պլանը սահմանել 9505212.6 հազար ՀՀ դրամ:

2) Ոչ էլեկտրական էներգիա գործառնական դասակարգման ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման 5134 պլանը պակասեցնել 200.000 ՀՀ դրամով, ճշտված պլանը սահմանել 400.000 ՀՀ դրամ:

3) Ճանապարհային տրանսպորտ գործառնական դասակարգման ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման

ա. 5113 հոդվածի պլանը պակասեցնել 4.800.000 ՀՀ դրամ, պլան չսահմանել:

բ. 5134 հոդվածի պլանը պակասեցնել 200.000 ՀՀ դրամով, պլան չսահմանել:

4) Օտարումից մուտքեր գործառնական դասակարգման ծախսային ծրագրի տնտեսագիտական դասակարգման պլանը պակասեցնել 5.150.000 ՀՀ դրամ, պլանը սահմանել 9.450.000 ՀՀ դրամ

5) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը պակասեցնել 3.516.000 հազար ՀՀ դրամով, ճշտված պլանը սահմանել 2.284.000 ՀՀ դրամ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄՈՒՇԵՂ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, Շահումյան 5
Հեռ. 0234- 6 - 00 - 78
Էլ.փոստ: taperakan.ararat@mta.gov.am, taperakan@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*30 նոյեմբերի 2020 թվականի թիվ 44- Ն*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների դրույթներով՝

*Համայնքի ավագանին որոշում է.*

Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Տափերական համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի, վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

*Որոշմանը քվեարկեցին Կողմ՝ 6 հոգի Դեմ՝ 0 հոգի Ձեռնպահ՝ 0 հոգի*

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՄԱՂԱՔՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
5. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ 0410055

Հավելված Արարատի մարզի
Տափերական համայնքի ավագանու
2020թ. նոյեմբերի 30 -ի թիվ 44–Ն որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2021ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Տափերական համայնքում տեղական տուրքերի դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ քսանհինգ հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն կետի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է

նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն կետի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հիսուն հազար դրամ.

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսանհինգ հազար դրամ.

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ վեց հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսաներեք հազար դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում երկու հազար հինգ հարյուր դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում վեց հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնմեկ հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում քսաներեք հազար դրամ.

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ հարյուր յոթանասունհինգ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ,
դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,
ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,
զ. վիճակախաղերի համար՝ յոթանասունհինգ հազար դրամ.

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար վեց հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնմեկ հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնվեց հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ վեց հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ.

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար հազար դրամ,
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ հազար յոթ հարյուր հիսուն դրամ,
գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,
դ. այլ արտաքին գովազդի համար՝ յոթ հարյուր հիսուն դրամ,
ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,
զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

12) Տափերական համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

13) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ հինգ հազար դրամ.

14) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

15) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ միլիոն երկու հարյուր հիսուն հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երեք միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Տափերական համայնքում տեղական վճարների դրույքաչափերը.

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեք հազար դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեք հազար դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար երեք հազար դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝երեք հազար դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝երկու հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար հազար դրամ.

7) Համայնքի տարածքում աղբահանությունը կազմակերպելու համար տեղական վճար սահմանել՝

Կենցաղային աղբի համար յուրաքանչյուր մեկ անձի համար ըստ հաշվառման անձանց քանակի՝ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 150 դրամ:

8) Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով.

ա) առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հիսուն Հայաստանի Հանրապետության դրամ.

բ) հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, օդանավակայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ քսան Հայաստանի Հանրապետության դրամ.

գ) վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ տասնհինգ Հայաստանի Հանրապետության դրամ.

դ) գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ երեք Հայաստանի Հանրապետության դրամ, իսկ զորանոցների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ ութ Հայաստանի Հանրապետության դրամ.

ե) արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ հինգ Հայաստանի Հանրապետության դրամ.

զ)Ոչ կենցաղային աղբի համար , ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը սահմանվում է՝.

ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ երեք հազար Հայաստանի Հանրապետության դրամ, կամ այդ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ տասը հազար Հայաստանի Հանրապետության դրամ.

9) ջրահեռացման վճար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ հիսուն դրամ:

10) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ հինգ հազար դրամ.

11) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հազար դրամ.

12) Համայնքի տարածքում անշարժ գույքի օբյեկտներին նոր հասցե տրամադրելու համար՝ հազար դրամ:

13)Անասնաբույժի ծառայություններից օգտվելու վճար ըստ ժամանակացույցի, փաստացի անասնագլխաքանակի հիման վրա, մեկ միավորի հաշվով 100 դրամ մեկ ամսվա համար:

ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄՈՒՇԵՂ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, Շահումյան 5
Հեռ. 0234- 6 - 00 - 78
Էլ.փոստ: taperakan.ararat@mta.gov.am, taperakan@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*30 նոյեմբերի 2020 թվականի թիվ 45- Ա*

03-093-0036-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ ենթակետով , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի N186-Ն հրամանը և Հայաստանի Հանրապետության կառավարության 24/12/2003 թիվ 1801-Ն որոշումը

*Համայնքի ավագանին որոշում է.*

Տափերական համայնքի կադաստրային քարտեզի 03-093-0036-0013 ծածկագրով համայնքային սեփականություն չփոխանցված 0.12789 հա հողամասը ճանաչել որպես համայնքային սեփականություն:

*Որոշմանը քվեարկեցին* *Կողմ՝* 6 *հոգի* *Դեմ՝* 0 *հոգի* *Ձեռնպահ* 0 *հոգի*

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՄԱՂԱՔՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
5. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ
Տափերական համայնք, Շահումյան 5
Հեռ. 0234- 6 - 00 - 78
Էլ.փոստ: taperakan.ararat@mta.gov.am, taperakan@yandex.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

*30 նոյեմբերի 2020 թվականի թիվ 46- Ա*

03-093-0051-0027 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 42-րդ ենթակետով , հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 1-ի N186-Ն հրամանը և Հայաստանի Հանրապետության կառավարության 24/12/2003 թիվ 1801-Ն որոշումը

*Համայնքի ավագանին որոշում է.*

Տափերական համայնքի կադաստրային քարտեզի 03-093-0051-0027 ծածկագրով համայնքային սեփականություն չփոխանցված 46 քմ հողամասը ճանաչել որպես համայնքային սեփականություն:

*Որոշմանը քվեարկեցին Կողմ՝6 հոգի Դեմ՝0 հոգի Ձեռնպահ՝0հոգի*

1. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՍԱՏՈՒՐ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ՄԱԿԱՐՅԱՆ ՍՄԲԱՏ
4. ՄԱՂԱՔՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
5. ՄԵԼԻՔՅԱՆ ՍԱՄՎԵԼ
6. ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՏԱՓԵՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԱՎԱԳԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ 0470105551